Ավետիք Իսահակյան

Մշուշը ծածկեց դաշտերը անծիր

Մշուշը ծածկեց դաշտերը անծիր. –
Դալուկ ճակատս դի՛ր այրող բարձին,
Եվ թո՛ղ ինձ մենակ, և դուռս գոցի՛ր,
Ես չեմ կարոտնա քո վերադարձին;

Իմ երազների աստղերը գոհար
Մի պայծառ երկինք շուրջս են տարածում.
Իմ հոգու հանդեպ մահը հաղթահար.
Իմ հոգին հավերժ՝ չունի մահացում:

Եվ անարգում եմ աշխարհքը համայն,
Ուր ամեն մի մարդ – մի ձև անցավոր,
Ուր ամեն մի կյանք՝ թշվառ և ունայն,
Գաղափարն՝ անզոր, և նյութը հզոր;

Մըշո՛ւշ, դու ծածկի՛ր աշխարհքը անծիր. –
Թո՛ղ, դարման մի՛ դիր իմ խորունկ խոցին.
Եվ թո՛ղ ինձ մենակ, գնա՛, հեռացի՛ր, -
Ես չեմ հավատում քո լաց ու կոծին …

1909
Թիֆլիս